

էր կռիւ յայտարարել անոր միակ սափրիչին, որ գերագոյն բժիշկն էր գեղին, մահամերձները կէս ճամբէն ետ դարձնող, արիւն առնելու մասնագիտութեամբ ու քրտինք հանող իր լափաներովը: Անտեղի էր վարժարան երթալ, որ գետնայարկ սենեակ մըն էր ձմրան միայն բաց, երբ տիրացու Սիմոնը իր ցանքը ընելէ ետքը, տունին փայտը խնայելու համար, մեծ ձիւներուն, կը հաւաքէր տասնեակ մը տղայ ու փոխ կը սորվեցնէր, ինչպէս նաեւ ծննդեան, միւռոն-կաթի տաղերը: Շաբա՛թ մը: Յետոյ ժամով հեռու ուրիշ գեղեր, աւելի մեծ, աւելի կանոնաւոր, որոնք սիրով պիտի կիսէին իրենց չունեցած հացը Հայաստանի դարիպներուն հետ: Աւելի յետոյ, լեռնային գիծով իյնալ Նիկիոյ շրջանը, ուր քաղաքի չափ խիտ բնակչութեամբ չէն գեղեր պիտի կրնային պատսպարել զիրենք, մեր պարագային լեռները շրջող ասպատակներուն խառնելով զիրենք: Այսպէս կը թելադրէր ուսուցիչը, վախնալով թրքական դաւէ մը, քանի որ կառավարիչը հետաքրքրուած կը թուէր առաջնորդին հիւրերով: Հեռագի՛ր մը, Ատաբաղար, բաւ էր երկու օտարականները իրարմով վտանգելու: Մաթիկին մօրուքը, առանձինն, հրաւէր մըն էր արդէն անոր օտարութիւնը բարձրադասակ բարբառող: Կրնային այս բոլոր վախերը մնալ վախի վիճակին մէջ: Բայց թարմ էր ձերբակալութիւնը իրենց գեղէն, իրեն ազգական հաճի Տիրանին, որ քեռորդիի պէս բան մը կ'իյնար ուսուցիչին: Զիթապտուղ էր բերած, քանի մը փարա չահելու: Իր տարագը-փանթալո՛ն, որ պետական համազգեստի մը չափ հազուադէպ էր այդ օրերուն տեղացիի մը վրայ- կասկած կը ներշնչէր: Ուսուցիչին անձնական երաշխաւորութիւնը հաներ էր զայն բանտէն, բայց չէր բաւած արգիլել անոր ձերբակալութիւնը Ատաբաղարի մէջ:

Թուրքերը մեզ նախատելու այդ նուրբ ձեւէն հաճոյք կը զգային, օրէնքին հարկադրանքը դնելով մէջտեղ հո՛ն՝ ուր անձնական քմահաճոյքը կ'իշխէր: Այս փորձառութեամբ, լաւ էր քիչ մը ատեն յետաձգել Արմաշը: Դէպքերը